

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Յիսուս
փոթորկոտ
ծովը կը
հանդարտեցնէ



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.





Յիսուս եւ իր
աշակերտները
նաւակի մը մէջ
էին, երբ սաստիկ
քամի մը ելաւ: Ան
Գալիլիոյ ծովը
տակն ու վրայ
ըրաւ: Այս
տեսակի քամի
կրնայ նաւը
կոտորել եւ
ընկղմեցնել:



Քամին վախցուց աշակերտները
Ալիքները ծածկեցին նաևակը, ջուր լեցնելով անոր
մէջ: Սակայն Յիսուս խոր քունի մէջ էր բարձի մը

վրայ, եւ կը
քնանար
քամիին
մէջ:




Աշակերտները արթնցուցին Յիսուսին, պռռալով.
"Վարպետ. վարպետ, մենք կը կորսուինք":




"Ինչու այսքան վախով լեցուած էք,
օ՛հ, դուք անհաւատներ", Յիսուս հարցուց իր
աշակերտներուն, ետքը Յիսուս հրամայեց քամիին,
որ դադրի փչելէ եւ... Յիսուս հրամայեց սաստիկ
կատղած ալիքներուն որ հանդարտին...



Եւ քամին հանդարտեցաւ... ծովը
խաղաղ եւ հանդարտ եղաւ:




Աշակերտները զմայլեցան, ըսելով. "Ո՞վ կրնայ այս
ընել, որ մենք եւ իսկ հովերը եւ ծովը Ասոր կը
հնազանդին":



Ժամանակ մը ետք, Յիսուս ուրիշ բազմազբաղ
օր մը անցուց: 5000 մարդէ աւելի իրեն
կը հետեւէին ամառի տեղ մը: Աստուծոյ
ուժով, Յիսուս անոնց կերակրեց
գործածելով միայն
մէկ պզտիկ տղու
մը ճաշը: Հիմա
երեկոյ էր:
Յիսուս
բոլորը
ցրուեց:



Մինչեւ իսկ աշակերտները գացին քովէն: Յիսուս
անոնց նաւը իրմէ առաջ դրկեց Գալիլիոյ ծովուն
դիմացի ափը:





Երբ ամբողջ
ժողովուրդը
ըկեց, Յիսուս
առանցին լեռ
բարձրացաւ,
որ աղօթէ: Երբ
իրիկուն եղաւ
ինք առանձին էր:





Լիճին մէջ աշակերտները
փոթորիկի բռնուեցան:
Փոթորիկը արգելք
հանդիսացաւ, որ
առաջ երթան,
նոյնիսկ
ժամերով
դիպարելէ
ետք:





Աշակերտները
չէին գիտեր,
բայց անոնց
մեծ անակնկալ
կը սպասեր:





Առաւօտեան ժամը
երեքի եւ վեցի մէջ,
փոթորիկով լեցուն
ծովուն վրայ
աշակերտները
բան մը տեսան,
որ իրենց վախով
լեցուց: "Ոգի է"
անոնք պոռացին:





Սակայն ան
Յիսուսն էր,
իրենց Տէրը եւ
վարպետը, որ
ջուրին վրայէն
քալելով իրենց
քով կու գար:



"Ուրախ եղէք"
Յիսուս կանչեց
անոնց: "Ես եմ, մի՛
վախնաք": Պետրոսը
պատասխանեց.
"Տէր, եթէ այդ դուն
ես, հրաման տուր
ինձի, որ քովդ գամ
ջուրին վրայէն":
Ուրեմն Յիսուս ըսաւ.
"Եկո՛ւր": Պետրոս
քաջօրէն նաւէն
դուրս ելաւ ջուրին
վրայ եւ Յիսուսի
քով գնաց:





Բայց երբ
տեսաւ հովին
սաստկութիւնը,
Պետրոս
վախցաւ եւ
ընկղմելու
սկսաւ: Ան
պռռաց. "Տէր,
ազատէ զիս":



Ամիջապես Յիսուս իր ձեռքը
երկարեց եւ բռնեց Պետրոսին:
"Օ՛հ, դուն պզտիկ հաւատքով,
ինչո՞ւ կասկածեցար", հարցուց Ան:
Եւ երբ Պետրոս եւ Տէր Յիսուս նաւ
ելան հովը հանդարտեցաւ:



Յետոյ անոնք, որոնք
նաւուն մէջ էին եկան
եւ պաշտեցին Յիսուսի
ըսելով. "Իրաւ Դուն ես
Աստուծոյ Որդին":



Յիսուս փոթորկոտ ծովը կը հանդարտեցնէ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 8, Մատթէոս 14,
Մարկոս 4, Ղուկաս 8

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

